ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ»
ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» 2000 թվականի նոյեմբերի 6-ի ՀՕ-112 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 34-րդ և 35-րդ կետերով.

«34) **ակցիա՝** կիրառվում է «Առևտրի և ծառայությունների մասին» օրենքով սահմանված իմաստով.

35) **զեղչ՝** կիրառվում է «Առևտրի և ծառայությունների մասին» օրենքով սահմանված իմաստով:»:

Հոդված 2. Օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ մասի 8-րդ կետի «է» ենթակետում «զեղչեր կամ ակցիաներ» բառերը փոխարինել «ակցիաներ, այդ թվում՝ զեղչեր,» բառերով:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՏԵՂԵԿԱՆՔ

ԳՈՐԾՈՂ ՕՐԵՆՔԻ ՓՈՓՈԽՎՈՂ ԵՎ ԼՐԱՑՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔ

Հոդված 3. Օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները և տերմինները

1. Սույն օրենքում օգտագործվող հիմնական հասկացություններն ու տերմինները կիրառվում են հետևյալ իմաստով.

1) **տնտեսական մրցակցություն կամ մրցակցություն՝** տնտեսավարող սուբյեկտների մրցություն, որի պայմաններում նրանցից յուրաքանչյուրի ինքնուրույն գործողություններով օբյեկտիվորեն բացառվում կամ սահմանափակվում է համապատասխան ապրանքային շուկայում ապրանքների շրջանառության ընդհանուր պայմանների վրա միակողմանի ազդելու հնարավորությունը.

2) **ապրանք՝** քաղաքացիական իրավունքի օբյեկտ, այդ թվում՝ գույք, աշխատանք, ծառայություն (ներառյալ՝ ֆինանսական), որը նախատեսված է իրացման համար.

3) **փոխադարձ փոխարինելի ապրանքներ՝** ապրանքներ, որոնք կարող են համեմատվել ըստ իրենց գործածության նշանակության, կիրառման, որակական, տեխնիկական, գնային կամ այլ հատկանիշներով այնպես, որ ձեռք բերողը սպառման գործընթացում կամ արտադրական նպատակներով օգտագործման ընթացքում փաստացի փոխարինում է կամ պատրաստ է փոխարինելու դրանք մեկը մյուսով.

4) **ապրանքային շուկա՝** որոշակի տարածքում ապրանքի և դրա փոխադարձ փոխարինելի ապրանքների շրջանառության ոլորտ, որի սահմանները որոշվում են համապատասխան տարածքում ապրանքի ձեռքբերման, իրացման կամ արտադրման, տնտեսական կամ այլ հնարավորություններով կամ նպատակահարմարությամբ և դրա սահմաններից դուրս այդպիսի հնարավորությունների կամ նպատակահարմարության բացակայությամբ: Ապրանքային շուկան բնութագրվում է ապրանքատեսակային ու աշխարհագրական սահմաններով, ուսումնասիրության ժամանակահատվածով, դրա սուբյեկտների կազմով և ծավալով.

5) **ապրանքային շուկայի ապրանքատեսակային սահման՝** տվյալ ապրանքի և դրա փոխադարձ փոխարինելի ապրանքների ամբողջություն.

6) **ապրանքային շուկայի աշխարհագրական սահման՝** որոշակի աշխարհագրական տարածք (այդ թվում՝ ճանապարհ, օդային, ջրային, ցամաքային և այլ երթուղի), որի շրջանակում տնտեսապես հնարավոր կամ նպատակահարմար է ձեռք բերել, իրացնել կամ արտադրել տվյալ ապրանքը և դրա փոխադարձ փոխարինելի ապրանքները, և առկա չէ այդ հնարավորությունը կամ նպատակահարմարությունը տվյալ տարածքից դուրս: Ապրանքային շուկայի աշխարհագրական սահմանը կարող է ներառել

Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքը կամ դրա մի մասը կամ Հայաստանի Հանրապետության (կամ դրա մի մասի) և այլ պետության (կամ դրա մի մասի) տարածքը.

7) **ապրանքային շուկայի ուսումնասիրության ժամանակահատված՝** որոշակի ժամանակահատված (օր, ամիս, տարի), որի շրջանակում ուսումնասիրվում է ապրանքային շուկան.

8) **ապրանքային շուկայի սուբյեկտներ՝** տվյալ ապրանքը և դրա փոխադարձ փոխարինելի ապրանքներն իրացնողը, արտադրողը կամ ձեռք բերողը.

9) **իրացնող՝** ապրանք իրացնող կամ հնարավոր իրացնող իրավաբանական կամ ֆիզիկական անձ կամ պետական մարմին.

10) **ձեռք բերող՝** ապրանք ձեռք բերող կամ հնարավոր ձեռք բերող իրավաբանական կամ ֆիզիկական անձ կամ պետական մարմին.

11) **սպառող՝** սպառման նպատակով ապրանք ձեռք բերող կամ հնարավոր ձեռք բերող իրավաբանական կամ ֆիզիկական անձ կամ պետական մարմին.

12) **ապրանքային շուկայի ծավալ՝** ապրանքային շուկայի աշխարհագրական սահմանում տվյալ ապրանքի և դրա փոխադարձ փոխարինելի ապրանքների իրացման կամ ձեռքբերման ընդհանուր ծավալը՝ բնեղեն և (կամ) արժեքային արտահայտությամբ.

13) **իրացում՝** օտարում (վաճառք, մատակարարում, այլ կերպ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցում), մատուցում կամ կատարում.

14) **ձեռքբերում՝** գնում, ստացում կամ ընդունում.

15) **Հանձնաժողով՝** Մրցակցության պաշտպանության հանձնաժողով.

16) **պետական մարմին՝** պետական կամ տեղական ինքնակառավարման մարմին, պետական կամ համայնքային ոչ առևտրային կազմակերպություն, պետության կամ համայնքի հիմնարկ, Կենտրոնական բանկ, Հայաստանի Հանրապետության կամ Հայաստանի Հանրապետության համայնքի անունից հանդես եկող կամ պետական մարմնի կամ տեղական ինքնակառավարման մարմնի գործառույթ կամ լիազորություն իրականացնող իրավաբանական անձ կամ այլ կազմակերպություն, Հայաստանի Հանրապետության կամ Հայաստանի Հանրապետության համայնքի՝ 50 տոկոս և ավելի փայաբաժին ունեցող կազմակերպություն.

17) **տնտեսավարող սուբյեկտ՝** անհատ ձեռնարկատեր, իրավաբանական անձ, այլ կազմակերպություն, դրա ներկայացուցչություն կամ մասնաճյուղ, անձանց խումբ կամ անձանց միություն, իսկ սույն օրենքով նախատեսված՝ համակենտրոնացման, անբարեխիղճ մրցակցության և տնտեսական գործունեության համակարգման դեպքերում տնտեսավարող սուբյեկտ է համարվում նաև ֆիզիկական անձը.

18) **տնտեսավարող սուբյեկտի պաշտոնատար անձ՝** տնտեսավարող սուբյեկտի միանձնյա գործադիր մարմնի իրավասություններն իրականացնող անձ կամ կոլեգիալ գործադիր մարմնի անդամ կամ կազմակերպչական, կարգադրական կամ վարչատնտեսական գործառույթներ իրականացնող անձ.

19) **առևտրային օբյեկտ՝** գույքային համալիր (հողամաս, շենք, կառույց), որն օգտագործվում է իրացման ոլորտում ապրանքներն սպառողին հասցնելու համար.

20) **առևտրային ցանց՝** երկու կամ ավելի առևտրային օբյեկտների համախումբ, որոնք ընդհանուր կառավարման ներքո են կամ գործում են միևնույն ապրանքային նշանի կամ անհատականացման այլ միջոցի ներքո.

21) **տնտեսական պայմաններ (գործոններ)՝** ապրանքի ձեռքբերման, արտադրության, իրացման (ծառայության մատուցման, աշխատանքի կատարման) հետ կապված ծախսեր, հարկեր, տուրքեր, պարտադիր վճարներ, գնաճ, գնանկում.

22) **գնի չհիմնավորված բարձրացում՝** տնտեսավարող սուբյեկտի կողմից որոշակի ժամանակահատվածում ապրանքի և (կամ) դրա փոխադարձ փոխարինելի ապրանքների գնի՝ տնտեսական պայմաններով (գործոններով) չպայմանավորված բարձրացում.

23) **գնի չհիմնավորված իջեցում՝** տնտեսավարող սուբյեկտի կողմից որոշակի ժամանակահատվածում ապրանքի և (կամ) դրա փոխադարձ փոխարինելի ապրանքների գնի՝ տնտեսական պայմաններով (գործոններով) չպայմանավորված իջեցում.

24) **գնի չհիմնավորված պահպանում՝** տնտեսավարող սուբյեկտի կողմից որոշակի ժամանակահատվածում ապրանքի և (կամ) դրա փոխադարձ փոխարինելի ապրանքների գնի պահպանումն այն դեպքում, երբ որոշակի տնտեսական պայմանների (գործոնների) առկայությունը կարող էր հանգեցնել կամ պետք է հանգեցներ ավելի ցածր կամ ավելի բարձր գնի սահմանման.

25) **խտրական պայմաններ՝** ապրանքային շուկա մուտք գործելու, արտադրության, փոխանակման, սպառման, իրացման կամ ապրանքի այլ կերպ փոխանցման պայմաններ, այդ թվում՝ ապրանքի գինը, որոնք տնտեսավարող սուբյեկտի կամ սպառողի համար ստեղծում են անհավասար պայմաններ կամ անհավասար դրություն այլ տնտեսավարող սուբյեկտի կամ սպառողի համեմատությամբ.

26) **մրցակցության կանխման, սահմանափակման կամ արգելման հատկանիշներ՝** անձանց խումբ չհանդիսացող տնտեսավարող սուբյեկտների քանակի կրճատում, ապրանքի գնի բարձրացում կամ իջեցում, որոնք կապված չեն ապրանքային շուկայում տնտեսական պայմանների համապատասխան փոփոխությունների հետ, անձանց խումբ չհանդիսացող տնտեսավարող սուբյեկտների կողմից ապրանքային շուկայում ինքնուրույն գործողություններից հրաժարում, ապրանքային շուկայում տնտեսավարող սուբյեկտների միջև հակամրցակցային համաձայնությունների հետևանքով կամ այլ անձի կողմից տրված՝ նրանց համար պարտադիր կատարման ենթակա ցուցումներին համապատասխան կամ անձանց խումբ չհանդիսացող տնտեսավարող սուբյեկտների գործողությունների համաձայնեցման հետևանքով ապրանքի շրջանառության ընդհանուր պայմանների սահմանում, այլ հանգամանքներ, որոնք տնտեսավարող սուբյեկտի համար հնարավորություն են ստեղծում միակողմանի ազդել ապրանքային շուկայում ապրանքի շրջանառության ընդհանուր պայմանների վրա, ինչպես նաև պետական մարմինների և (կամ) դրանց պաշտոնատար անձանց կողմից ապրանքների կամ տնտեսավարող սուբյեկտների նկատմամբ օրենքով չնախատեսված պահանջների սահմանումը.

27) **ուղղակի վերահսկողություն՝** իրավաբանական անձի կողմից ընդունվող որոշումները կանխորոշելու հնարավորություն, որը դրսևորվում է իրավաբանական անձի գործադիր մարմնի գործառույթների իրականացման, իրավաբանական անձի ձեռնարկատիրական գործունեության իրականացման պայմանները սահմանելու իրավունքի ձեռքբերման և (կամ) իրավաբանական անձի կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալը կազմող ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի (բաժնեմասերի) ընդհանուր թվի 50 տոկոսից ավելին տիրապետելու միջոցով.

28) **անուղղակի վերահսկողություն՝** իրավաբանական անձի կողմից ընդունվող որոշումները կանխորոշելու հնարավորությունն այնպիսի իրավաբանական կամ ֆիզիկական անձի միջոցով, որն ունի ուղղակի վերահսկողություն տվյալ իրավաբանական անձի նկատմամբ.

29) **ակտիվի արժեք՝** ակտիվի հաշվեկշռային արժեք, իսկ դրա բացակայության դեպքում՝ ակտիվի փաստացի կամ գործարքային արժեք.

30) **հասույթ՝** համապատասխան ժամանակաշրջանի ընթացքում տնտեսավարող սուբյեկտի սովորական գործունեությունից առաջացող տնտեսական օգուտների համախառն դրամական ներհոսք, որը հանգեցնում է սեփական կապիտալի աճի, բացառությամբ սեփական կապիտալում մասնակիցների կողմից ներդրումների հետևանքով սեփական կապիտալի աճի: Հայաստանի Հանրապետությունում հարկ վճարողների համար հասույթ է համարվում ապրանքների իրացումից ստացման ենթակա ձեռնարկատիրական եկամուտը՝ դրամական արտահայտությամբ, որը չի ներառում անուղղակի հարկերի գումարները.

31) **փայաբաժին՝** իրավաբանական անձի կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալում մասնակցության իրավունք (բաժնեմաս, բաժնետոմս, այլ արժեթուղթ).

32) **պետական օժանդակություն տրամադրող մարմին՝** պետական մարմին, ինչպես նաև բոլոր այն մարմինները կամ կազմակերպությունները կամ պաշտոնատար անձինք, որոնք լիազորված են հանրային ֆինանսների կամ հանրային ռեսուրսների հաշվին տրամադրելու պետական օժանդակություն սույն օրենքի իմաստով.

33) **օր՝** օրենսդրությամբ սահմանված աշխատանքային օր:

34) **ակցիա՝** կիրառվում է «Առևտրի և ծառայությունների մասին» օրենքով սահմանված իմաստով.

35) **զեղչ՝** կիրառվում է «Առևտրի և ծառայությունների մասին» օրենքով սահմանված իմաստով:

2. Սույն օրենքում օգտագործվող մյուս հասկացությունները և տերմինները կիրառվում են սույն օրենքով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով, այլ օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված իմաստով:

Հոդված 12. Բանակցային ուժեղ դիրքի չարաշահումը

1. Արգելվում է տնտեսավարող սուբյեկտների կողմից բանակցային ուժեղ դիրքի չարաշահումը:

2. Բանակցային ուժեղ դիրքի չարաշահում է համարվում տնտեսավարող սուբյեկտի ցանկացած գործողություն կամ վարքագիծ, որը հիմնավորված չէ տնտեսական պայմաններով կամ գործոններով և վնասում է կամ կարող է վնասել բանակցություններում թույլ դիրք ունեցող կողմի շահերը:

3. Բանակցային ուժեղ դիրքի չարաշահում է համարվում՝

1) ապրանքներ ձեռք բերելուց անհիմն հրաժարվելը.

2) խտրական պայմանների սահմանումը կամ կիրառումը.

3) ձեռնարկատիրական հարաբերությունների անհիմն դադարեցումը.

4) արտոնությունների տրամադրման, այդ թվում՝ զեղչերի կիրառման, հավելյալ ծառայությունների մատուցման պարտադրումը, որի դիմաց բանակցային ուժեղ դիրք ունեցող տնտեսավարող սուբյեկտի կողմից որևէ գործողություն չի իրականացվում.

5) պայմանագրի կամ համագործակցության պայմանների միակողմանի և հաճախակի փոփոխությունն առանց պայմանագրի կողմի համաձայնության կամ գիտության.

6) առևտրային օբյեկտում իրացնողների ապրանքների ներկայացման և իրացման համար չհիմնավորված հավելյալ վճարների գանձումը.

7) բանակցային ուժեղ դիրք ունեցող սուբյեկտին պատկանող առևտրային ցանցերում մրցակից ապրանքների գների, ցուցադրման եղանակի, տեղի և իրացման համար էական նշանակություն ունեցող այլ պայմանների միջև արհեստական տարբերությունների սահմանումը կամ կիրառումը.

8) պայմանագրի կողմին պայմանների պարտադրումը, որոնք վերաբերում են՝

ա. այլ տնտեսավարող սուբյեկտի հետ պայմանագիր կնքելու արգելքին.

բ. այլ տնտեսավարող սուբյեկտի հետ կնքվող պայմանագրի վերաբերյալ տեղեկատվության տրամադրմանը.

գ. մատակարարված և առևտրային ցանցի սեփականությունը համարվող ապրանքի փչացման, վնասվածքի, կորստի կամ ոչնչացման դեպքում տնտեսավարող սուբյեկտի

կողմից վնասների փոխհատուցմանը, բացառությամբ այն դեպքի, երբ դա տեղի է ունեցել վերջինիս մեղքով.

դ. տնտեսավարող սուբյեկտի կողմից այն ծախսերի փոխհատուցմանը, որոնք կապված չեն ապրանքի մատակարարման պայմանագրի կատարման կամ ապրանքի հետագա իրացման հետ.

ե. այն ապրանքի վերադարձման պարտավորության սահմանմանը, որոնք չեն իրացվել որոշակի ժամանակահատվածի ընթացքում, բացառությամբ այն դեպքերի, երբ ապրանքների վերադարձման պահանջը սահմանված է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ կամ պայմանագրով.

զ. ապրանքները բանակցային ուժեղ դիրք ունեցող սուբյեկտի մատնանշած ապրանքային նշանով իրացնելուն.

է. իրացման ընթացքում ակցիաներ, այդ թվում՝ զեղչեր, ~~զեղչեր կամ ակցիաներ~~ կիրառելու, արտոնություններ սահմանելու արգելքին.

9) առանց գրավոր պայմանագիր կնքելու կամ գործարքը հաստատող այլ գրավոր փաստաթղթի առկայության մատակարարում իրականացնելուն պարտադրելը.

10) բանակցային ուժեղ դիրք ունեցող տնտեսավարող սուբյեկտի կողմից առևտրային հարաբերության մյուս կողմի համար վատթարացնող այլ պայմանների պարտադրանքը.

11) այլ գործողություն կամ վարքագիծ, որը պարունակում է սույն հոդվածի 2-րդ մասի հատկանիշները:

(03.03.21 ՀՕ-112-Ն օրենքի 1-ին հոդվածի փոփոխությունը 12-րդ հոդվածում հնարավոր չէ կատարել, քանի որ 03.03.21 ՀՕ-92-Ն օրենքով արդեն իսկ ամբողջությամբ խմբագրվել է օրենքը, որի արդյունքում բացակայում են նշված բառերը)

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (ՓԱՍՏԱԹՂԹԱՅԻՆ ԿՈԴ՝ Կ-289-03.06.2022-ՏՀ-011/1) ԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (ՓԱՍՏԱԹՂԹԱՅԻՆ ԿՈԴ՝ Կ-289[1] -03.06.2022-ՏՀ-011/1) ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություն ներն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
	1	2	3	4	5
1.	ՀՀ կառավարություն	«Առևտրի և ծառայությունների մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծ	«Առևտրի և ծառայությունների մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի (այսուհետ նաև՝ Նախագիծ) 1-ին հոդվածով «Առևտրի և ծառայությունների մասին» օրենքում (այսուհետ նաև՝ Օրենք) լրացվող նոր՝ 4.3-րդ գլխում առաջարկում ենք գլխի և	Ընդունվել է	Ընդունվել է

			հոդվածների համարներն ու վերնագրերը շարադրել թավ տառերով՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 31-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջը, այն է՝ «Նորմատիվ իրավական ակտում կատարվող փոփոխությունների կամ լրացումների ձևը (տեսքը) պետք է համապատասխանի փոփոխվող կամ լրացվող իրավական ակտի ձևին (տեսքին)»:		
2.	ՀՀ կառավարություն	«Առևտրի և ծառայությունների մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդված	Նախագծի 1-ին հոդվածով Օրենքում լրացվող նոր՝ 15.5-րդ հոդվածի 1-ին մասով սահմանվում է. «Զեղչն ապրանքի իրացմանը կամ ծառայության մատուցմանը նախորդող մեկ ամսվա ընթացքում ապրանքի վաճառքի կամ ծառայության մատուցման միջին գնի կարճաժամկետ նվազեցումն է (...)»: Մեջբերվածի վերաբերյալ նշենք, որ «ապրանքի իրացմանը կամ ծառայության մատուցմանը նախորդող մեկ ամսվա ընթացքում» ձևակերպումից բխում է, որ որպես զեղչի ժամկետի հաշվարկման սկիզբ սահմանվում է ապրանքի իրացման	Ընդունվել է մասամբ Նախագծի 1-ին հոդվածով Օրենքում լրացվող նոր՝ 15.5-րդ հոդվածի 3-րդ մասը կրում է որոշակի բեռ՝ հստակեցնելու՝ որ գնի նկատմամբ է կիրառվելու զեղչը:	Ընդունվել է մասամբ

			կամ ծառայության մատուցման պահը: Մինչդեռ նշված ձևակերպումը բավարար չափով հստակ չլինելու պատճառով անհնար է հասկանալը, թե կոնկրետ երբ է սկսվում ժամկետի հաշվարկը: Վերոգրյալի կապակցությամբ հարկ է անդրադառնալ նաև նույն հոդվածի՝ նմանատիպ բովանդակություն ունեցող 3-րդ մասին, այն է. «Ապրանքի կամ ծառայության գնի տոկոսային նվազեցումը կատարվում է զեղչի հրապարակման պահին նախորդող մեկ ամսվա ընթացքում ապրանքի վաճառքի կամ ծառայության մատուցման միջին գնից»: Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Նախագծով արդեն իսկ առկա է ժամկետի հաշվարկի ավելի հստակ տարբերակ, ինչպես նաև անհարկի կրկնություններից խուսափելու նպատակով՝ առաջարկում ենք Նախագծի 1-ին հոդվածով Օրենքում լրացվող նոր՝ 15.5-րդ հոդվածի 1-ին մասում «ապրանքի իրացմանը կամ ծառայության մատուցմանը» բառերը փոխարինել «զեղչի հրապարակման		

			պահին» բառերով և նույն հոդվածի 3-րդ մասը հանել:		
3.	ՀՀ կառավարություն	«Առևտրի և ծառայությունների մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդված	Նախագծի 1-ին հոդվածով Օրենքում լրացվող նոր՝ 15.5-րդ հոդվածի 5-րդ մասը սահմանում է. «Ակցիա իրականացնողը զեղչ սահմանելիս կարող է նախատեսել սպառողների կողմից որոշակի գործողությունների կատարում ենթադրող և զեղչի կիրառումը պայմանավորող հստակ պայմաններ, որոնք պետք է լինեն պարզ և ընկալելի»: Նախագծի 1-ին հոդվածով Օրենքում լրացվող նոր՝ 15.6-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է. «Ակցիա իրականացնողը ապրանքի իրացման կամ ծառայության մատուցման գնի փոփոխման հետ չկապված այլ միջոցառում կիրառելիս կարող է նախատեսել սպառողների կողմից որոշակի գործողությունների կատարում ենթադրող տվյալ ակցիայի կիրառումը պայմանավորող հստակ պայմաններ, որոնք պետք է լինեն	Ընդունվել է	Ընդունվել է

			պարզ և ընկալելի»: Վերոգրյալ երկու դրույթների համեմատությունից հասկանալի է, որ դրանք նույնաբովանդակ դրույթներ են, որոնց միակ տարբերությունը կայանում է «որոշակի գործողությունների կատարում ենթադրող և զեղչի կիրառումը պայմանավորող հստակ պայմաններ» և «որոշակի գործողությունների կատարում ենթադրող տվյալ ակցիայի կիրառումը պայմանավորող հստակ պայմաններ» ձևակերպումներում «և» շաղկապի առկայության կամ բացակայության մեջ, ինչի արդյունքում 1-ին ձևակերպման մեջ ստացվում է երկու պայման, իսկ երկրորդի մեջ՝ մեկ: Կարծում ենք՝ անհրաժեշտ է սահմանել միատեսակ կարգավորում երկու դրույթների համար:		
4.	ՀՀ կառավարություն	«Առևտրի և ծառայությունների մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 3-	Նախագծի 3-րդ հոդվածի վերնագիրն առաջարկում ենք հանել՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 8-րդ մասը, այն է՝ «Օրենսդրական ակտի հոդվածները	Ընդունվել է	Ընդունվել է

		րդ հոդված	ունենում են վերնագրեր, բացառությամբ փոփոխություն կամ լրացում նախատեսող օրենսդրական ակտերի: Հոդվածների վերնագրերը համապատասխանում են հոդվածների բովանդակությանը: Հոդվածների վերնագրերի վերջում որևէ կետադրական նշան չի դրվում: Հոդվածի մասերը, կետերը և ենթակետերը վերնագիր չեն ունենում:»:		
5.	ՀՀ կառավարություն	«Առևտրի և ծառայությունների մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 3-րդ հոդված	Նախագծի 3-րդ հոդվածի համաձայն՝ «1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրը: 2. Սույն օրենքի կարգավորումները տարածվում են ուժի մեջ մտնելուց հետո հայտարարվող ակցիաների նկատմամբ:»: Վերոնշյալ կարգավորումների վերաբերյալ հարկ ենք համարում նշել հետևյալը. «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Նորմատիվ իրավական ակտն ընդունելու իրավասություն ունեցող մարմինը պարտավոր է նախատեսել նորմատիվ իրավական ակտի ուժի	Ընդունվել է	Ընդունվել է

			մեջ մտնելու ավելի ուշ ողջամիտ ժամկետ, բացառությամբ սույն հոդվածի 4-րդ մասով սահմանված նորմատիվ իրավական ակտերի, եթե ակտով սահմանվում են այնպիսի իրավակարգավորումներ, որոնց համար անհրաժեշտ է հիմնավոր ժամանակահատված, որը հնարավորություն կտա հասցեատիրոջը իր վարքագիծը համապատասխանեցնելու սահմանված պահանջներին, կամ սահմանված իրավակարգավորումները վատթարացնում են անձի իրավական վիճակը:» Նախագծով սահմանվում են այնպիսի իրավակարգավորումներ, որոնք նախատեսում են պահանջներ, կիրառման պայմաններ, պարտականություններ: Մասնավորապես՝ Նախագծով, ի թիվս այլնի, սահմանված են ակցիայի մասին իրազեկմանը ներկայացվող պահանջները, ակցիա իրականացնողի համար որոշակի պարտականություններ: Ուստի, կարծում ենք՝ Նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված		

			Նախագծի ուժի մեջ մտնելու ժամկետը հիմնավոր ժամանակահատված չէ, որը կարող է բացառել հասցեատեր սուբյեկտների՝ ակցիա իրականացնողների կողմից իրենց վարքագիծը սահմանված պահանջներին համապատասխանեցնելու հնարավորությունը: Հետևաբար առաջարկում ենք վերանայել Նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասում սահմանված Նախագծի ուժի մեջ մտնելու ժամկետը՝ ողջամիտ ժամկետ սահմանելու նպատակով: Բացի այդ, Նախագծի 3-րդ հոդվածի 2-րդ մասում նախատեսված է անցումային դրույթ՝ Նախագծով սահմանված կարգավորումների գործողության տարածումը միայն Նախագիծն ուժի մեջ մտնելուց հետո հայտարարվող ակցիաների նկատմամբ: Մինչդեռ, հարկ է նկատել, որ Նախագիծն ուժի մեջ մտնելու պահին գործող ակցիաների վերաբերյալ կարգավորումներ նախատեսող անցումային դրույթները բացակայում են:		

6.	ՀՀ կառավարություն	«Առևտրի և ծառայությունների մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծ	Նախագծերի փաթեթի ընդունմամբ, կարծում ենք՝ առաջանալու է Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում համապատասխան լրացումներ կատարելու անհրաժեշտություն: Մասնավորապես՝ Նախագծի 1-ին հոդվածով կատարվող լրացումների արդյունքում Օրենքում սահմանվում են նոր դրույթներ, որոնք սահմանում են ակցիաների և դրանց իրականացման կարգի վերաբերյալ կարգավորումներ, ակցիայի մասին իրազեկմանը ներկայացվող պահանջներ: Օրենքի 18-րդ հոդվածում սահմանված է Օրենքի պահանջների խախտման համար պատասխանատվությունը, որի համաձայն՝ «Սույն օրենքի պահանջները խախտելու համար առևտրի և ծառայությունների ոլորտում գործունեություն իրականացնող իրավաբանական և ֆիզիկական անձինք կրում են պատասխանատվություն՝ Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով: Սույն օրենքով սահմանված	Ընդունվել է մասամբ Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացում կատարելու անհրաժեշտությունը բացակայում է, քանի որ ակցիաների իրականացման հետ կապված հարցերը քննարկվելու են «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքի համատեքստում: Ինչ վերաբերում է «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքին, Նախագծերի փաթեթը լրացվել է «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին»	Ընդունվել է մասամբ

			դրույթները խախտելու համար կիրառվում են Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված պատասխանատվության միջոցները:»: Վերոգրյալի կապակցությամբ նշենք, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 12-րդ գլխում նախատեսված են առևտրի և ծառայությունների բնագավառում վարչական իրավախախտումների վերաբերյալ կարգավորումներ, հետևաբար, կարծում ենք՝ անհրաժեշտություն կառաջանա այդ գլխում լրացնել Նախագծով սահմանվող կարգավորումների խախտման համար պատասխանատվություն նախատեսող դրույթներ: Նախագծերի փաթեթի ընդունմամբ, կարծում ենք՝ անհրաժեշտություն կառաջանա «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ մասի 8-րդ կետի «է» ենթակետի «զեղչեր կամ ակցիաններ» բառերն փոխարինել «ակցիաներ» բառով՝	օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծով, որով «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքը լրացվել է «ակցիա» և «զեղչ» հասկացություններով: Միևնույն ժամանակ, տարընկալումներից խուսափելու նպատակով «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ մասի 8-րդ կետի «է» ենթակետում «զեղչեր կամ ակցիաներ» հասկացությունները փոխարինվել են «ակցիաներ, այդ թվում՝ զեղչեր» բառերով:	

			հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Նախագծով սահմանված «ակցիա» հասկացությունն իր մեջ ներառում է զեղչը: Ազգային ժողովի որոշման ընդունման անհրաժեշտությունը բացակայում է:		
7.	ՀՀ կառավարություն	«Առևտրի և ծառայությունների մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծ	Նախագծի առավել արդյունավետ կիրառման նպատակով անհրաժեշտ է կատարել տեխնիկական շտկումներ:	Ընդունվել է	Ընդունվել է
8.	ՀՀ կառավարություն	«Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդված	«Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածում առաջարկում ենք «Հայաստանի Հանրապետության» բառերը գրել «հարկային» բառից առաջ, ինչպես նաև «ՀՕ-165-Ն» հերթական համարը հանել՝ Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի լրիվ անվանման հիշատակումն համապատասխանեցնելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» 18-րդ հոդվածի 5-րդ մասում	Ընդունվել է	Ընդունվել է

			սահմանված պահանջներին՝ «Սահմանադրական օրենք չհանդիսացող օրենսգրքի լրիվ անվանումը հիշատակելիս հետևյալ հաջորդականությամբ ներառվում են օրենքի ընդունման տարին, ամիսը (տառերով), ամսաթիվը, օրենսգրքի վերնագիրը և «օրենսգիրք» բառը, եթե վերնագիրը չի ներառում այն: Սահմանադրական օրենք չհանդիսացող օրենսգրքի կրճատ անվանումը հիշատակելիս նշվում է օրենսգրքի վերնագիրը և «օրենսգիրք» բառը, եթե վերնագիրը չի ներառում այն:»:		
9.	ՀՀ կառավարություն	«Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդված	«Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածում «(այսուհետ՝ Օրենսգիրք)» ձևակերպումն առաջարկում ենք հանել՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծում Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքին այլևս հղում	Ընդունվել է	Ընդունվել է

			չի կատարվում:		
10.	ՀՀ կառավարություն	«Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդված	«Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածում «4-րդ հոդվածը» ձևակերպումն առաջարկում ենք փոխարինել «4-րդ հոդվածի 1-ին մասը» ձևակերպմամբ՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 4-րդ հոդվածը բաղկացած է 1-ին մասից, որը բաժանված է 72-րդ կետերի:	Ընդունվել է	Ընդունվել է
11.	ՀՀ կառավարություն	«Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդված	«Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի ուժի մեջ մտնելու ժամեկտը նախատեսված չէ: Հարկ ենք համարում նշել, որ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ «Նորմատիվ իրավական այն ակտը, որով ուժի մեջ մտնելու ժամկետ նախատեսված	Ընդունվել է	Ընդունվել է

			չէ, ուժի մեջ է մտնում դրա պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:» Այսպես՝ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքում նորմատիվ իրավական ակտի ուժի մեջ մտնելու ժամկետի վերաբերյալ սահմանված կանոնի համաձայն՝ «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագիծն ուժի մեջ է մտնելու դրա պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: Միևնույն ժամանակ, հարկ է նկատել, որ «Առևտրի և ծառայությունների մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասով ուժի մեջ մտնելու ժամկետ է սահմանված պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրը: Հիմք ընդունելով վերոգրյալն՝ առաջարկում ենք Նախագծերի փաթեթում ընդգրկված նախագծերի համար նախատեսել ուժի մեջ մտնելու միևնույն ժամկետ:		

12.	ՀՀ կառավարություն		Օրենքների նախագծերի փաթեթին ավելացել է նոր՝ «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծ:	Ընդունվել է	Ընդունվել է